Andranik Margaryan
Memorial

# ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ 10-ՐԴ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի շախմատի ակադեմիան (հասցե՝ ք. Երևան, Շչենկո 34) 2020թ. հունվարի 8-ից մինչև 16-ը կազմակերպում է Անդրանիկ Մարգարյանի 10-րդ հուշամրցաշարը, որին կարող են մասնակցել մինչև 18 տարեկան պատանիներ և աղջիկներ: Հուշամրցաշարը կանցկացվի տարբեր տարիքային խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Հուշամրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է **2 050 000 ՀՀ դրամ**: Մրցաշարերում 1-3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով և պատվոգրերով:

**Մրցաշար Ա1 /մինչև 18տ. պատանիներ և աղջիկներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 180 000 |
| 2-րդ տեղ | 150 000 |
| 3-րդ տեղ | 120 000 |
| 4-րդ տեղ | 100 000 |
| 5-րդ տեղ | 80 000 |
| 6-րդ տեղ | 50 000 |
| 7-րդ տեղ | 50 000 |

**Մրցաշար Ա2 /մինչև 14տ. պատանիներ և աղջիկներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 120 000 |
| 2-րդ տեղ | 100 000 |
| 3-րդ տեղ | 80 000 |
| 4-րդ տեղ | 50 000 |
| 5-րդ տեղ | 50 000 |

**Մրցաշար Ա3 /մինչև 12տ. պատանիներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 80 000 |
| 2-րդ տեղ | 60 000 |
| 3-րդ տեղ | 50 000 |
| 4-րդ տեղ | 30 000 |
| 5-րդ տեղ | 30 000 |

**Մրցաշար Ա4 /մինչև 10տ. պատանիներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 70 000 |
| 2-րդ տեղ | 50 000 |
| 3-րդ տեղ | 40 000 |
| 4-րդ տեղ | 30 000 |

**Մրցաշար Ա5 /մինչև 8տ. պատանիներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 40 000 |
| 2-րդ տեղ | 25 000 |
| 3-րդ տեղ | 20 000 |

**Մրցաշար Բ /մինչև 12տ. աղջիկներ/**

| | |
|---|---|
| 1-ին տեղ | 70 000 |
| 2-րդ տեղ | 50 000 |
| 3-րդ տեղ | 40 000 |
| 4-րդ տեղ | 30 000 |
| 5-րդ տեղ | 20 000 |

**Հատուկ մրցանակներ**

| | |
|---|---|
| Մինչև 18տ. աղջիկ | 50 000 |
| Մինչև 16տ. աղջիկ | 40 000 |
| Մինչև 14տ. աղջիկ | 40 000 |
| Մինչև 10տ. աղջիկ | 25 000 |
| Մինչև 8տ. աղջիկ | 20 000 |

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուխգոլցով, այնուհետև Բուխգոլցով և սև գույնով խաղացած պարտիաների քանակով: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մրցաշարերում իրավունք ունեն մասնակցելու այն շախմատիստները, ովքեր ունեն.
**Ա1 մրցաշար**՝ ազգային վարկանիշ (աղջիկներ՝ առնվազն I կարգ)
**Ա2 մրցաշար**՝ առնվազն I կարգ
**Ա3 մրցաշար**՝ առնվազն II կարգ
**Ա4 մրցաշար**՝ առնվազն III կարգ (2012 և 2013թթ.՝ առնվազն IV կարգ, մարզերի համար՝ IV կարգի 1 բալ )
**Ա5 մրցաշար**՝ առնվազն IV կարգի 1 բալ
**Բ մրցաշար**՝ առնվազն III կարգ (2012 և 2013թթ.՝ առնվազն IV կարգ, մարզերի համար՝ IV կարգի 1 բալ)

Ա1 և Ա2 մրցաշարերում կհաշվարկվի ազգային և միջազգային (ՖԻԴԵ) վարկանիշ: Ա1 և Ա2 մրցաշարերի մասնակիցները պետք է ունենան ՖԻԴԵ-ի նույնականացման համար /չունենալու դեպքում նախապես դիմել Հայաստանի շախմատի ֆեդերացիա մինչև դեկտեմբերի 23-ը/:

**Ժամակարգը**. 90 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

***Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց***

| **Ամսաթիվ** | **Տուր** | **Ա5, Ա4, Ա3 և Բ մրցաշարեր** | **Ա2 և Ա1 մրցաշարեր** |
|---|---|---|---|
| 8 հունվարի | I | 11:30 | 15:30 |
| 9 հունվարի | II | 11:00 | 15:00 |
| 10 հունվարի | III | 11:00 | 15:00 |
| 11 հունվարի | IV | 11:00 | 15:00 |
| 12 հունվարի | V | 11:00 | 15:00 |
| 13 հունվարի | VI | 11:00 | 15:00 |
| 14 հունվարի | VII | 11:00 | 15:00 |
| 15 հունվարի | VIII | 11:00 | 15:00 |
| 16 հունվարի | IX | 11:00 | 15:00 |
| 16 հունվարի | փակման արարողություն | 17:00 | 19:00 |

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է **30 րոպե**:

**ՄՈՒՏՔԱՎՃԱՐ**
**մինչև դեկտեմբերի 25-ը՝ ժամը 10:00-18:00-ն**
- Ա1 և Ա2 մրցաշարեր – **4000 ՀՀ դրամ** (**Ա1 մրցաշարում** 2000-ից ցածր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների մուտքավճարը սահմանված է **5000 ՀՀ դրամ**),
- Ա3, Ա4, Ա5 և Բ մրցաշարեր – **3000 ՀՀ դրամ**

**մինչև դեկտեմբերի 27-ը ՝ ժամը 10:00-18:00-ն**
- Ա1 և Ա2 մրցաշարեր – **5000 ՀՀ դրամ** (**Ա1 մրցաշարում** 2000-ից ցածր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների մուտքավճարը սահմանված է **6000 ՀՀ դրամ**),
- Ա3, Ա4, Ա5 և Բ մրցաշարեր – **4000 ՀՀ դրամ**

**ԳՐԱՆՑՈՒՄ**

Մասնակիցների գրանցումն այսուհետ կատարվում է օնլայն տարբերակով: Մրցաշարի պաշտոնական կայքէջում անհրաժեշտ է սեղմել ԳՐԱՆՑՎԵԼ կոճակին, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը: Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570018417800100
ՀՎՀՀ՝ 02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **մասնակցի անունը և ազգանունը, հեռախոսահամար, Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարի մասնակցության վճար**:

**Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Դեկտեմբերի 28-ից գրանցման հայտեր չեն ընդունվում:**

**Մասնակիցների և մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:**

**Մանրամասների համար զանգահարել 010-448479 և 043-448473 հեռախոսահամարներով:**